Հաստատված է՝
ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
27.12.2023թ. 28/35-Լ որոշմամբ

Խորհրդի նախագահ՝ Սիմոն Բաբայան

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրային պաշտպանության երկամյա զարգացման ծրագիրը **(այսուհետ՝ նաև Ծրագիր)** ռազմավարական փաստաթուղթ է, որը սահմանում է 2024-2025 թվականների հանրային պաշտպանության զարգացման հիմնական ուղղությունները: Ծրագիրն ուղղված է հանրային պաշտպանությունն ապահովելու համար լրացուցիչ միջոցներ և գործիքներ ներգրավելու, ինչպես նաև գործող գործիքակազմը արդյունավետ օգտագործելու միջոցով հանրային պաշտպանության ինստիտուտի զարգացմանը: Ծրագիրը մեկ ամբողջական փաստաթուղթ է, որի նպատակներն ու խնդիրներն են.

- *«Փաստաբանության մասին» օրենքի 41-րդ հոդվածով սահմանված խմբերի անձանց ժամանակին և պատշաճ անվճար իրավաբանական օգնության տրամադրումը.*
- *տրամադրվող իրավաբանական օգնության որակի շարունակական բարձրացումը.*
- *ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ծանրաբեռնվածության մեղմացումը.*
- *հանրային պաշտպանների հաստիքների ավելացման համար անհրաժեշտ միջոցների ձեռնարկումը.*
- *նյութատեխնիկական միջոցների թարմացումը և զարգացումը.*
- *գրասենյակի պահուստային ֆոնդում միջոցների ներգրավումը:*

Ծրագրի հիմքում դրվում են հետևյալ հիմնական սկզբունքները՝

ա) իրատեսություն (առաջադրված նպատակների և խնդիրների իրականացման բավարար հիմնավորումների առկայություն),

բ) գնահատելիություն (կատարման արդյունքների գնահատման հնարավորություն),

գ) համահունչություն (ծրագրի առանձին կետերի միջև պատճառահետևանքային կապի, ծրագրի ընդհանուր տրամաբանական ընթացքի առկայություն):

Ծրագրի հիմքում կարող են դրվել նաև այլ, սակայն նշված սկզբունքներին չհակասող սկզբունքներ:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Գրասենյակի աշխատանքի արդյունավետության բարձրացում.

Ժամանակի ռացիոնալ կառավարման համար պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև այլ կազմակերպությունների հետ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ծավալի ավելացման միջոցով, ինչպես նաև գործող էլեկտրոնային հանրային պաշտպան ծրագրի կատարելագործում:

Գրասենյակի աշխատանքի արդյունավետության բարձրացմանը նպաստող հաջորդ կարևոր գործոնը դա ներքին հսկողության համակարգի կատարելագործումն է, ինչը ենթադրում է հանրային պաշտպանությունն իրականացնող անձանց կողմից տրամադրվող իրավաբանական օգնության գործընթացի նկատմամբ հսկողության և վերահսկողության գործող մեխանիզմների կատարելագործում, մասնավորապես էլեկտրոնային հանրային պաշտպանի ծրագրում նոր գործիքների ներդրում, որը հնարավորություն կտա համաժամյա ռեժիմում ուսումնասիրել հանրային պաշտպանի աշխատանքը:

Գրասենյակի աշխատանքի արդյունավետության գործում կարևոր նշանակություն կարող է ունենալ նաև նյութատեխնիկական միջոցների թարմացումը և զարգացումը: Գրասենյակը ժամանակակից նյութատեխնիկական միջոցներով զինելը հնարավորություն կտա հանրային պաշտպանների աշխատաժամանակը կրճատել, որպիսի կարիքն այս պահին

հատկապես ընդգծվում է մարզային նստավայրերում: Նշված նպատակի իրագործումը հնարավոր է իրականացնել ինչպես նյութատեխնիկական միջոցների ձեռքբերմամբ այնպես էլ համապատասխան ծրագրային ցանցային լուծումների միջոցով:

2. **Գրասենյակի պահուստային ֆոնդում միջոցների ներգրավում.**

Հանրային պաշտպանության զարգացման որպես օժանդակ ուղղություն կարող է դիտարկվել նաև անվճար իրավաբանական օգնություն տրամադրող անձանց ռեսուրսը:

Տվյալ ռեսուրսների համալրմանը կարող է նպաստել նաև Գրասենյակի պահուստային ֆոնդում ֆինանսական միջոցների ներգրավումը:

Ֆոնդում միջոցների ներգրավման առանցքային աղբյուր կարող է հանդիսանալ միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող թիրախային ծրագրերը:

3. Մարզային նստավայրերի ավելացում և հասանելիության ապահովում.

Նպատակահարմար է Հանրային պաշտպանի գրասենյակի մարզային նստավայրերը ավելացնել՝ հանրության շրջանում անվճար իրավաբանական օգնության հնարավորինս լայն հասանելիության ապահովման համար:

Հանրային պաշտպանության շահառուների շրջանում, իրականացնել անվճար իրավաբանական օգնության հասանելիության վերաբերյալ իրազեկման աշխատանքներ:

Իրազեկման աշխատանքները անհրաժեշտ է իրականացնել նաև ըստ թիրախային խմբերի պայմանավորված իրավական խնդիրներով:

4. Կադրային քաղաքականության կատարելագործմանն ուղղված միջոցառումներ.

Նշված նպատակի իրականացման համար անհրաժեշտ է իրականացնել կադրերի թիրախային լրացուցիչ վերապատրաստումներ, սեմինար քննարկումների միջոցով:

Կադրային քաղաքականության կատարելագործմանը կնպաստի նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում հանրային պաշտպանության ինստիտուտի վերաբերյալ

իրազեկումը, որը կարող է իրականացվել պարբերական հանդիպումների միջոցով ուսումնական պրակտիկաների միջոցով: Նշված նպատակի իրականացումը կարող է նպաստել նաև հանրային պաշտպանի աշխատանքի վերաբերյալ հետաքրքրության ձևավորմանը, որը կբերի նոր որակյալ կադրերի ներգրավման:

Կադրային քաղաքականության զարգացման վրա կարևոր դեր ունի նաև հանրային պաշտպանությունում հանրային պաշտպան չհանդիսացող երիտասարդ փաստաբանների ներգրավումը, վերջիններս այդ ժամանակահատվածում զինվելով համապատասխան փորձառությամբ և գիտելիքներով արագ կարող են համալրել հանրային պաշտպանների թափուր հաստիքները՝ ապահովելով գրասենյակի շահառուների որակյալ և արդյունավետ իրավաբանական օգնության տրամադրումը:

Փաստաբաններին, փաստաբանական գրասենյակներին, իրավաբանական կլինիկաների ուսանողներին հանրային պաշտպանությունում հատկապես մարզերում ներգրավելու նպատակով նախատեսել խրախուսման միջոցներ:

5. Օրենսդրության և գործող ընթացակարգերի բարեփոխմանը միտված անհրաժեշտ նախագծերի մշակում և հանրային պաշտպանության ոլորտի խնդիրների բարձրաձայնում.

Հանրային պաշտպանության ոլորտում շարունակական բարեփոխումներ իրականացնելու նպատակով, հավքագրելով պրակտիկայում առաջացած խնդիրները, մշակել և գործընկերների միջոցով կամ այլ խողովակներով ներկայացնել օրենսդրական բարեփոխումների նախագծեր:

Համապատասխան հարթակներում Հանրային պաշպանության խնդիրների բարձրաձայնումը կարող է դրսևորվել պետական և տեղական ինքակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց հանրային պաշտպանության ու հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության, ինչպես նաև գրասենյակի աշխատանքային ծանրաբեռնվածության մասին հրապարակային իրազեկմամբ:

6. Օտարերկրյա համանման կառուցների գործունեության, ընթացակարգերի ուսումնասիրություն և լավագույն փորձի ներդրում.

Օտարերկրյա համանման կառույցների հետ հանդիպումների, համագործակցության, սեմինար-քննարկումների շրջանակում ուսումնասիրել և փոխ առնել լավագույն փորձը:

7. Հանրային պաշտպանի գրասենյակի կայքի զարգացում.

Հանրային պաշտպանի գրասենյակի համացանցային կայքում և այլ սոցիալական հարթակներում տեղեկատվական բնույթի նյութերի հաճախակի հրապարակմամբ նպաստել հանրության շրջանում իրավագիտակցության զարգացմանը, ինչպես նաև հանրային պաշտպանության մասին իրազեկմանը: Համապատասխան համացանցային տիրույթներում կատարել հանրային պաշտպանների մասնակցությամբ գործերով դատական պրակտիկայի ներկայացում:

8. Կարիքների պարբերական գնահատում.

Հանրային պաշտպանության ընթացիկ խնդիրները և կարիքները բացահայտելու համար իրականացնել շարունակական ուսումնասիրություններ օգտագործելով մոնիթորինգային գործիքակազմ: Ուսումնասիրությունը կներառի ինչպես ներքին այնպես էլ արտաքին կարիքների բացահայտումը, որպիսի պայմաններում կարող է լրամշակվել նաև սույն ծրագրով արձանագրված ուղղությունները:

9. Տարեկան զեկույցների հրապարակում.

Հրապարակման առարկա դարձնել Հանրային պաշտպանի գրասենյակի տարեկան արդյունքները, ինչպես նաև հանրային հետաքրքրության առարկա հանդիսացող որևէ իրավունքի ճյուղի վերաբերյալ վերլուծությունները:

ԱՄՓՈՓՈՒՄ

2024-2025 թվականների երկամյա զարգացման ծրագրում տեղ գտած բոլոր դրույթներն իրատեսական են, իրագործելի, վերջնարդյունքները՝ չափելի: Նախատեսվող աշխատանքների համար կան արդեն ձևավորված ամուր հիմքեր:

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2024-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

№	Միջոցառումներ	Նպատակ, ակնկալվող արդյունք	Կատարող(ներ)	Կատարման ժամկետ
1.	Գրասենյակի աշխատանքի արդյունավետության բարձրացում	Հանրային պաշտպանության միջոցով անվճար իրավաբանական օգնության տրամադրման ընթացքում առավել սեղմ ժամկետներում անհրաժեշտ տեղեկատվության ստացում՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև այլ կազմակերպությունների հետ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ծավալի ավելացման միջոցով: Հսկողության և վերահսկողության միասնական մեթոդաբանության մշակում՝ անհրաժեշտության դեպքում հաշվի առնելով նաև տվյալ մարզի կամ հանրային	ՀՀ փաստաբանների պալատ, Հանրային պաշտպանի գրասենյակ, Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	Շարունակական

		պաշտպանի գրասենյակի նստավայրի սպասարկման բնակավայրերի առանձնահատկությունները: Գրասենյակի նյութատեխնիկական միջոցների թարմացումը և զարգացումը:		
2.	Հանրային պաշտպանի գրասենյակի պահուստային ֆոնդում միջոցների ներգրավում	Միջազգային կամակերպությունների հետ համագործակցություն: Օրենքով չարգելված այլ միջոոցներ	ՀՀ փաստաբանների պալատ, Հանրային պաշտպանի գրասենյակ	Շարունակական
3.	Մարզային նստավայրերի ավելացում և հասանելիության ապահովում	Հանրային պաշտպանության միջոցով անվճար իրավաբանական օգնության հասանելիության բարձրացում	ՀՀ փաստաբանների պալատ, Հանրային պաշտպանի գրասենյակ	Շարունակական
4.	Կադրային քաղաքականության կատարելագործմանն ուղղված միջոցառումներ	Հանրային պաշտպանության միջոցով քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացում: Հանրային պաշտպանության ոլորտում (այդ թվում՝ հանրային պաշտպանի գրասենյակում) որակյալ և մրցունակ կադրերի ներգրավում (Հանրային պաշտպանությունում հանրային	ՀՀ փաստաբանների պալատ Հանրային պաշտպանի գրասենյակ	Շարունակական

		պաշտպան չհանդիսացող անձանց ներգրավում):		
5.	Օրենսդրության և գործող ընթացակարգերի բարեփոխմանը միտված անհրաժեշտ նախագծերի կազմում և շրջանառում, հանրային պաշտպանության ոլորտի խնդիրների բարձրաձայնում	Հանրային պաշտպանության ոլորտում ըստ անհրաժեշտության շարունակական բարեփոխումների իրականացում՝ հաշվի առնելով պրակտիկայում առաջացած խնդիրները: Հասարակության, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց հանրային պաշտպանության և հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության, ինչպես նաև գրասենյակի աշխատանքային ծանրաբեռնվածության մասին իրազեկվածության բարձրացում	ՀՀ փաստաբանների պալատ, Հանրային պաշտպանի գրասենյակ	Շարունակական
6.	Օտարերկրյա համանման կառուցների գործունեության, ընթացակարգերի ուսումնասիրություն և լավագույն փորձի ներդրում	Հանրային պաշտպանության միջոցով անվճար իրավաբանական օգնության որակի բարձրացում՝	ՀՀ փաստաբանների պալատ, դոնոր կազմակերպություններ (համաձայնությամբ), դոնոր	Շարունակական

		օտարերկյա լավագույն փորձի ներդրման միջոցով: Դոնոր կազմակերպությունների աջակցությամբ՝ այլ երկրների հանրային պաշտպանության գործընթացում ընդգրկված մարմինների հանրային պաշտպանների գործուղումների կազմակերպում (անհրաժեշտ միջոցների առկայության դեպքում)	կազմակերպություններ (համաձայնությամբ)	
7.	Հանրային պաշտպանի գրասենյակի կայքի զարգացում	Տեղեկատվական բնույթի նյութերի հրապարակում՝ հանրության շրջանում իրազեկվածության բարձրացման նպատակով:	ՀՀ փաստաբանների պալատ, հանրային պաշտպանի գրասենյակ	Շարունակական
8.	Ընթացիկ խնդիրների և կարիքների բացահայտման համար շարունակական ուսումնասիրություններ	մոնիթորինգային գործիքակազմի կիրառմամբ շարունակական ուսումնասիրությունը թույլ կտա բացահայտել հանրային պաշտպանության կարիքները, իսկ այն իր հերթին կարող է ապահովել սույն ծրագրով նախատեսված դրույթների կատարումն ապահովել ըստ	ՀՀ փաստաբանների պալատ, հանրային պաշտպանի գրասենյակ	Շարունակական

		առաջնահերթության կամ/և հանգեցնել լրամշակման անհրաժեշտության:		
9.	Տարեկան զեկույցների հրապարակում	Տարեկան արդյունքների հրապարակում, հետաքրքրության առարկա հանդիսացող որևէ իրավունքի ճյուղի վերաբերյալ վերլուծություններ:	ՀՀ փաստաբանների պալատ, հանրային պաշտպանի գրասենյակ	Յուրաքանչյուր տարվա համար մինչև հաջորդող տարվա հունվարի 31-ը